

ԿՐՕՆԱԿԱՆ

Ասէ ցնա Աստուած. «Անմիտ, յայսմ գիշերի զոգիդ ի քէն ի բաց պահանջիցեն, իսկ զոր պատրաստեցերն ո՛ւմ լինիցի»:

Եւ Աստուած ըսաւ անոր. «Անմիտ, եթէ այս գիշեր հոգիդ պահանջեն քեզմէ, իսկ ինչ որ պատրաստած ես, որո՞ւն պիտի մնայ»:

(Ղուկ. ԺԲ:20)

Ղուկասի Աւետարանէն առնուած «Անմիտ Հարուստին» այս առակով Քրիստոս մեզի երեք բաներ կը թելադրէ.

- Առաջին հերթին, ան մեզի կ'ըսէ թէ երբեմն յաջողութիւնը կրնայ լուրջ վնասներ պատճառել մեր Ֆիզիքական եւ բարոյական առողջութեան: Ազահութիւնը, դեղնորակ աչքերով այն գազանն է, որ պատրաստ է կուլ տալու աշխարհի չափանիշերով, այսպէս ըսած կեանքի մէջ յաջողածները: Տարիներ առաջ, Ամերիկեան «Նիուզ Ուիք» շաբաթաթերթը «Տանըլտ Թրամփի Աւետարանը» խորագրով յօդուած մը հրատարակած էր, Նիւ Նորքի յայտնի միլիառատէր՝ Պրն. Թրամփի, ներկայ Միացեալ Նահանգներու նախագահի մասին, որ այդ օրերուն տգիտօրէն յոխորտալով կ'ըսէր, թէ պատմութեան մէջ չէր եղած մէկը, որ իր տարիքին (այդ օրերուն 41 տարեկան) կրցած էր այնքան մեծ նիւթական յաջողութիւններ արձանագրել, որքան ինք: Սակայն ան կը մոռնար որ Մեծն Աղեքսանդր 33 տարեկանին գրաւած էր այդ օրերու ամբողջ քաղաքակիրթ աշխարհը, մինչ Քրիստոս 30 տարեկանին արդէն իսկ յաջողած էր հիմերը նետել երկնքի արքայութեան: Որոշ է թէ կարգ մը անհատներու համար յաջողութիւնը երբեմն կրնայ ժխտական հետեւանքներ ունենալ, որովհետեւ ան առիթ կու տայ նորանոր յաջողութիւններու եւ որ սովորաբար իր կարգին ծնունդ կու տայ «ազահութիւն» կոչուող այդ անյագ ճիւղին:

Մեր Տէրը՝ Քրիստոս, ուրիշ առիթով մը կ'ըսէ մեծահարուստ, երիտասարդ ազնուականի մը. «Զգուշացի՛ր ընչաքաղցութենէ», որուն վրայ երիտասարդ տխուր պիտի հեռանար Աստուածորդւոյն քովէն, որովհետեւ ան չափազանց հարուստ էր եւ տակաւին հոգեպէս պատրաստ չէր բաժնուելու իր հարստութենէն, որուն համար ալ Յիսուս պիտի ըսէր իր մօտ գտնուողներուն. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, աւելի հեշտ է ուղտին համար անցնիլ ասեղի ծակէն, քան թէ մեծահարուստին համար դրախտ մտնել»:

Մեր Տիրոջ ըսել ուզածը պարզապէս հետեւեալն էր. «Դրամը միայն գործիք մը պարտի ըլլալ ձեր ձեռքերուն մէջ աւելի վեհ նպատակի մը համար, եւ ոչ թէ զայն դարձնելու ձեր կեանքի միակ նպատակակէտը», որովհետեւ այդ պարագային ան է որ կը տիրապետէ մեզի փոխանակ մենք անոր:

- Երկրորդ, Աստուածորդին կը փորձէր երիտասարդ եւ հարուստ ազնուականին հասկցնել թէ կեանքի յաջողութիւնները անպայմանօրէն չէին չափուեր մեր ամբարած հարստութիւններով: Առակին անմիտ հարուստը անպայմանօրէն յաջող գործատէր մըն էր եւ կը կարծէր թէ իր ամբարած հարստութիւնը պիտի դառնար իր արժեչափը, որուն համար ալ ան խորհեցաւ շինել տալ աւելի մեծ շտեմարաններ հոն ամբարելու իր հարստութիւնը, անտեսելով այն միակ իրողութիւնը, որ Աստուծոյ արժեչափը բոլորովին տարբեր էր մարդկայինէն:

Բոլոր անոնք՝ որոնք ծանօթ են մեր այսօրուան բնաբանի պատմութեան, պիտի անդրադառնան թէ մեծահարուստին միակ խօսակիցը ինք էր, իր անձն էր, «Անձ իմ, կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լե՛ր»։ Քրիստոս իր առակներով կը թելադրէր իր հետեւորդներուն հարստանալ միայն Աստուծով, եւ թերեւս ատով ան կ'ուզէր շեշտել այն իրողութիւնը, որ բարեգործութեամբ եւ բարիքով շահուած բարեկամութիւնները ոսկիէն եւ արծաթէն աւելի ծանր կը կշռէին Աստուծոյ արժեքափերու նժարին մէջ։ Մենք փոխանակ մեր սիրտերուն մէջ մեր բարեկամներուն եւ ընկերներուն դէմ քէնի եւ ոխի պատնէշներ կանգնեցնելու, պարտինք լրջօրէն նստիլ եւ հաշուի առնել թէ որքա՛ն թանկարժէք էին այդ բարեկամութիւնները մեզի համար։ Մենք փոխանակ խորհելու թէ մենք որքա՛ն դրամ դիզած ենք դրամատուններու մէջ, նախընտրելի պիտի ըլլար եթէ սկսէինք մտածել թէ ինչպէ՞ս կրնայինք այդ դրամները վերածել բարիքի մէկական աղբիւրներու։ Եւ վստահ եղէ՛ք սիրելիներ, որ մեր խիղճերը պիտի կատարէին ճշգրիտ ընտրութիւնը։

Եւ վերջապէս, հակառակ պարագային եթէ մեր խիղճերը կատարեն սխալ ընտրութիւն, մենք կը դառնանք ԵՍԱԿԵԴՐՈՆ։ Եթէ մենք ուշադրութեամբ կարդանք «Անմիտ Հարուստին» առակը, հոն պիտի տեսնենք թէ ան առնուազն տասը անգամներ կը գործածէ «ԵՍ» նախդիրը, երբ կը խօսի ինքնիրեն եւ ինքն իր մասին։ Անկասկած դիւրին չէ հարուստ եւ իմաստուն ըլլալը միաժամանակ։ Ու կը տարուինք հարց տալու մենք մեզի. «Արդեօք ո՞ր յանցանքին համար Քրիստոս մեծահարուստը «անմիտ» կոչեց։ Անոր ունեցած հարստութեա՞ն համար. անշուշտ ո՛չ։ Մեծահարուստին սխալը այն էր, որ ան բաւականաչափ հարուստ չէր դէպի Աստուած։ Ան հարուստ էր նիւթականով, սակայն աղքատ՝ հոգիով։ Թերեւս ան նիւթապէս հարուստ էր, բայց բարոյապէս՝ սնանկ, ատոր համար ալ այդ մեծահարուստը հակասութիւններու բարդոյթ մըն էր ինքնին։ Այո՛, թերեւս ան չափազանց հարուստ էր, բայց իրականութեան մէջ անմիտ էր, որովհետեւ անոր սիրտն ու նախասիրութիւնները սխալ ուղղութեան վրայ էին։

Մեզմէ իւրաքանչիւրի անձին մէջ կայ իմաստունն ու անմիտը, հերոսն ու վախկոտը, եւ ասոնցմէ իւրաքանչիւրը ունի իր տրամաբանութիւնը, որ յարմարացուած է որոշ նպատակի մը։ Իմաստունին համար յաւիտենականն է էականը, մինչ անմիտին համար նիւթը, դրամը, ինչքերը եւ մանաւանդ ներկան։ Վախկոտին կամ թուլամորթին համար իր անձին ապահովութիւնն է կարեւորը, մինչ հերոսին՝ յաղթանակը այս բոլորին վրայ։ Անմիտ մեծահարուստը կը ներկայացնէ մեզմէ իւրաքանչիւրին մէջ գտնուող վախկոտը, ան՝ որուն գոյութեան միակ նպատակն է ապահովել իր վատշուէր կեանքը, աճեցնել դրամատուններու մէջ գտնուող իր հաշիւները եւ ապա ըսել. «Անձ իմ, կե՛ր, ա՛րբ եւ ուրախ լե՛ր»։ Սակայն Հայր Աստուած կու գայ այդպիսիներուն ըսելու. «Անմիտ, իսկ ի՞նչ պիտի ըլլան այս բոլոր քու ամբարած հարստութիւններդ, եթէ այս գիշեր իսկ հոգիդ առնեմ եւ մեռնիս»։ Այս դասակարգի մարդիկ կը մոռնան ժողովրդական այն իմաստութիւնը, որ կ'ըսէ. «Եթէ օր մը տիրանաս հարստութիւններու, երբեք ինքզինքդ եղբօրմէդ, դրացիէդ եւ կամ բարեկամէդ աւելի վեր մի՛ դասեր, որովհետեւ մենք բոլորս մերկ կու գանք այս աշխարհ եւ ոչինչ կը տանինք մեր այս աշխարհէն»։

Մենք պարտինք հարուստ ըլլալ այս երկրի վրայ առանց մեծամտանալու եւ կամ առանց մեր յոյսերը դնելու հարստութեանց եւ ինչքերու անորոշութեան վրայ, այլ միայն՝ Աստուծոյ մեծութեան վրայ։ Մենք պարտինք ըլլալ հարուստ եւ լեցուն բարեգործութիւններով դէպի Աստուած եւ դէպի Անոր մեզի վստահած գործերը, եւ մանաւանդ գիտնանք կիսել Աստուծոյ մեզի պարգեւած բարիքները ուրիշներու հետ, աղքատներու եւ չքաւորներու հետ, եւ այդ ընելով իրա՛ւ հարստութիւն ապահովել երկինքի մէջ, որովհետեւ ա՛յդ է կեանքը, իրա՛ւ կեանքը, Աստուածահաճոյ կեանքը։ Թող չնմանինք նաւաբեկ հերոսին, որ կ'իյնայ անմարդաբնակ եւ անհիւրընկալ կղզի մը, ուր կարճ ժամանակ ետք պիտի սովամահ մեռնէր։ Մի քանի օրեր ետք յանկարծ ծովեզերքը կը գտնէ մեծ սնտուկ մը։ Խորհելով թէ կրնար մէջը ուտելիք գտնել, մեծ

ոգեւորութեամբ կը բանայ սնտուկը, սակայն հոն կը գտնէ միայն ոսկի եւ թանկարժէք քարեր, եւ հիասթափուած եւ յուսահատ կ'իյնայ գետին:

Վայրկեանի մը համար թող մենք մեզի դենք այդ դժբախտ նաւաստիին տեղը եւ հարց տանք մենք մեզի թէ ի՞նչ պիտի զգայինք եթէ օր մը իյնայինք յաւիտենականին ծովափը բոլորովին անոք եւ անպատրաստ, արդեօք մեր չափեցող անօթութիւնը պիտի գոհանա՞յ երկրաւոր կեանքի ընթացքին մեր հաւաքած գանձերով եւ կալուածներու հարստութեամբ, եւ ի վիճակի պիտի ըլլա՞նք առակի հերոսին նման ըսելու. «Անձ իմ, կեր, ա՛րբ եւ ուրախ լեր»։ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս, յաւիտենից, ամէն:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Փորձառութիւնը մայրն է իմաստութեան:

Եթէ վստահ չես թէ ո՞ւր կ'երթաս, հաւանաբար վերջաւորութեան ուրիշ տեղ կ'երթաս:

Առաքինութիւնը միա՛կ եւ իրա՛ւ ազնուութիւնն է:

Վատ բանուորը իր սխալը կը վերագրէ գործիքներուն:

Երբեք ուշ չէ բեկանուած բարեկամութիւններ նորոգելը:

Կարելի չէ միտքով արտ հերկել:

Ամէն ինչ կու գայ ձեզի եթէ համբերող էք:

Կռիւներ կը վերջանան, սակայն ըսուած խօսքերը երբեք չեն մեռնիր:

Ձեռքերու առատութիւնը գործը կը թեթեւցնէ:

Հագուստը մէկ թելով չէ հիւսուած:

Տարիները աւելի բան գիտեն քան գիրքերը:

Դրացիդ սիրէ՛, բայց պատնէշդ վար մի՛ առնէր:

Անգէտը ոչ մէկ բանէ կը կասկածի:

Քիչ ըսէ՛, բայց լաւ ըսէ՛: